

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 ԹԻՒԻ ԽԱՄԱՐ	
Վ. առնա	Փր. 1,50
Վ. առնային գուր	2
Ս. բառասան	2,50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չեն զրկուիր :
Նամակ գրամ եւոյն զրկել հե-
տեւեալ հասցէին ,
Վ. ԱՐՁՈՒԹԻՒՆ • ԿԱՏԱԿ • Ի
Վ. առնա (Պուլհարիա) :

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՀԻՊՈՏԵԱԲԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието

„ГАДАГЪ“
ВАРНА (България).

Հատը 7 1/2 Ստն/թիւ

Administration du journal

« GADAG »
VARNA, (Bulgarie).

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Մեր խօսքը ժողովրդին հետ է :

Անցեալ թէ ներկայ ամեն դորժառու-
նութեանց գերագոյն դատաւորը՝ ինքը
ժողովուրդն է , եթէ չը կայ ժողովուրդ ,
չկայ նաեւ աղդ , չկայ հայրենիք , չկայ
կրօն , չկայ և հաւատք . Աստուծոյ դոյու-
թիւնն կամ չը դոյուլիւնն իսկ ժողովուր-
դով է որ կը ճանչցուի , կը փառաւորուի .
առանց ժողովրդի անփառունակ է աշ-
խարհ , հայրենիք , Աստուած , կայսր ու
կաթողիկոս :

Եթէ այսօր ագէտ է ժողովուրդն , ան-
շուշտ օր մը կը զարթնու ու կը զար-
գանայ և գիտակցաբար կը կարգայ իւր
ահեղ դատաստանը մեր ամենուս հա-
մար ալ . պէտք է երկիւղած լինիմք մի-
այն ու միայն հանրութեան շահուն առջև :

Ժողովրդի ճակատագիրը խաղալիք
ընել և չուզել անսալ անոր ձայնին , վա-
ռութեանց ծայրագոյնն է , ինքնասպա-
նութիւն է :

Կ'ըսուի մեզ թէ կծու կը խօսինք ,
քանզի միայն գիտենք , տարակոյս չկայ
թէ խարխուլ չենք վտանգաւոր է , ու
պէտք է վար առնել , մենք նոր վէրքեր
չ'որ կը բանանք , այլ գանկրեն եղած

աղգասպանութեանց համար է , որոյ մա-
սին ժողովրդի ուշադրութիւնը կ'ուզենք
արթնցնել , պարտականութիւն մը՝ որ
նուիրական է իւրաքանչիւր մարդու հա-
մար :

Մենք չենք ըսած ու չը պիտի ըսենք
թէ յեղափոխութիւն պէտք չէ , այլ կ'ը-
սենք թէ՝ որոշակի հետամուտ լինելու և
հասկնալու ենք թէ՝ Ո՞րք և Ե՞րբ :

Մենք չենք ըսեր թէ՝ հարուստը , ու-
նեւորը գրամ թող չի տայ , արուեստա-
ւորը չը մասնակցի , ժողովուրդը անտար-
բեր մնայ , այլ կ'ըսենք թէ՝ որո՞ւ տայ ,
մինչեւ հիմայ ուսողներուն , թէ կռուի
դաշար անօթի ծարաւ կռուողներուն :

Ամթ ըսուած բանը բոլորովին մէկգի-
թողացինք . գառներու պէս , հորթերու
պէս աղգային մանկալիներ վաճառման
գրուած են , ու կը սակարկուին . կրօնա-
վաճառ Մըսթըրներ Հայ դրբեր կ'որդե-
րեն՝ երկնային զինուորներ պատրաս-
տելու , և վառնայի խեղճ Աղքատախը-
նամը փողոցէ փողոց , դռնէ դռն հաց
կը մուրայ Մըսթըրապատիւ Ամիրխան-
եանցի չը հաւնած քոստաներուն համար ,
և այս ամենը կը կատարուի մեր աչքե-
րուն առջեւ ու կըսուի թէ դեռ կծու կը
գրենք :

Ստատուծոյ սիրոյն, ըսէ՛ք, մինչեւ հիմայ ի՞նչ շահ ունեցանք սա ՅՈՅՅ ըսուած հերոսագործութիւններէն, և ի՞նչ պիտի շահինք ասկէ ետքը ըլլալիքէ, որուն ետեւը վազող դիւահարներ կը գտնուին սակաւին աստ ու անդ։

Եթէ խրաչողներ կան, ու չեն ուզեր կծուն լսել, թո՛ղ ուղղուին, հաշտուին ազգային շահուն հետ և հնազանդին ժողովրդի ձայնին։

Յ. ՉԱՔԸՐԵԱՆ

Ամենամեծ ախորժանօք կը հրատարակենք հետեւեալ երկու նամակներն որոնք զրկուած են «Կատակ»ի վարչութեան, մին Ռուսոմֆէն եւ միւսն մեզ ծանօթ բարեկամ Պ. Լիօյի կողմէ։

ՓՈՔՐԻԿ ՆԱՄԱԿՆԵՐ

Ա.

Հայ ժողովուրդը շատ մոռացկոտ և անյիշատար է։

Գուցէ անհատի համար սորա լույս կուծիւններ են, և նրան աւելի կը մօտեցնեն քրիստոնէական վարդապետութեան։ Բայց երբ մի ամբողջ ժողովրդեան յիշողութիւն կարճ է, նա մոռանում երէկուան իւր գլխին եկածները և ներողամիտ լինում, գէպի ինք վնասողները, նա յանցաւոր է իւր ապագայ սերնդեան առաջ։

Յիշողութիւնից զուրկ անհատը, զուրկ է իւր չարս կողմ, իրեն մէջ կատարուած երեւոյթների հասկանալուց, որովհետեւ նա չուտ է մոռանում այն, ինչ որ երէկ տեղի ունեցաւ, դրա համար և ընդունակ չէ կատարուած եղելութիւնների պատճառները հասկանալու։

Մի բան հասկանալու համար նախ պէտք է չը մոռանալ այն՝ և ապա մօտենալ նրան։ Ի՞նչու, պատճառն ի՞նչ էր, ո՞վ է մեղաւոր հարցերով։ Մոռացկոտ

մարդ կեանքի ալիքների մէջ շատ թըշուառ կը լինի։ Ապրիլ, նշանակում է իւր գոյութիւն պահպանելու համար կռուել, սա՛ բնութեան անողոր օրէնքն է և այս կռում ամենագորեղ զէնքերից մէկն էլ յիշողութիւնն է, ինչ որ ճիշդ է անհատի համար, նոյնն աւելի ճշմարտ է ամբողջ ժողովրդի համար։ Երբ մի ազգ մոռանում է, երէկ իրեն հետ պատահածները և չի հասկանում նոյն պատճառներ, նա թշուառ է, նա զսէ կեանքի կռում։ Աւելի հեռու գնալ հարկաւոր չէ այս ճշմարտութիւնը սպառնացանելու համար, բաւական է նայիլ մեր ժողովրդին։ Նա՛ նոյն իսկ այսօր իւր թշուառութեան վերին աստիճանին հասած և կորստեան անդունդի վերայ կանգնած՝ անընդունակ է հասկանալու այն պատճառները, որոնք նրան այդ վիճակին հասցրին . . . : Նա մոռացկոտ է, ուրեմն և կատարուած երեւոյթների սլաքաւորները գտնելու անընդունակ։ Այս բան շատ լուր ըմբռնեցին մեր այսպէս կոչուած «յեղափոխականներ»ը և ընդունելով իբր հիմք իրենց գործունէութեան ահա՛ այս քանի տարիներ է խաղում են ժողովրդեան այս թոյլ կողմի հետ, կարճ յիշողութիւն ունեցող մի ժողովուրդ չի սիրում մտաբերել այն՝ ինչ որ անցաւ, այն՝ ինչ որ կատարուեցաւ իւր մէջ, և միշտ միայն կրկնում էր, ի՞նչ կը լինի այսօր։ Նա չիմանում, որ այսօր հետեւանք է երէկուան և վաղը այսօրուան։

Եթէ մենք ուզում ենք վաղը ազատ մնալ այսօրուայ թշուառութիւններից պէտք է իմանանք նոյն պատճառները, այլապէս միշտ կը կրկնենք նոյն սխալները և թոյլ կ'տանք նորից մեզ հետ խաղալու զանազան բաղդախնդ իրենքին։

Ժողովուրդը, եթէ ուզում է այս վիճակից զուրս գալ, պէտք է յիշէ մօտիկ

անցեալում իրեն հետ պատահածները և լաւ հասկանայ նոցա պատճառները :

« Կատակ » ը իւր վերայ է առել ժողովրդին յիշեցներու մօտիկ անցեալը և գառնալ նրա՝ եթէ կարելի է այսպէս ասել « յիշատեալ » :

Կարճ յիշողութիւն ունեցող ժողովրդի համար սո՛ւ ահարժեշտ է : Նրա յարգելի խմբագրութեան սիրտիւր հրաւիրմամբ ես կ'աշխատեմ որքան իմ ոյժերս կը ներեն հետագայ « փոքրիկ նամակներովս » մի տող էլ աւելցնել այդ « յիշատեալի » մէջ :

Լ.Յ.Օ

Ռուստուք 19 Յունիս 1897

Յարգելի բարեկամ

Տիար Յ. Զարբրեան

Վառնա

« Կատակ » ի մէջ ձեր գրած յօդուածները « Լեռան մարդը » խորագրոյն տակ՝ կը կարդամ հաճոյքով . իսկ աւելի մեծ հաճոյքով պիտի կարդայի եթէ անոնք մի քիչ աւելի մեղմ ու շղատալեաց ոգւով գրուած ըլլային : Գիտեմ արդարեւ թէ՛ հայրենիքի սիրոյն կրակը՝ որ միշտ վառ մնացած է ձեր ներսիդին՝ հակառակ ձեր կրած զրկանքներուն, կ'ուզէ այլեւ ու մրկել ազգային դատին համար իր առջեւ ելած ամեն խղճողութիւնն, բայց այդ կրակը որ ունիք ձեր ներսիդին, ես կը փափաքէի որ այդ կրակով աւելի ջանայիք տաքցնել ու հետզհետէ վառել ազգային դատին համար սառնացեալ որսերը՝ քան այբել ու ոջնացնել անոր դէմ ելած խղճողութիւնները, դաւաճանութիւնները : Շինել, թէեւ քանդելէն աւելի դժուար, բայց աւելի հաճելի, աւելի օգտակար է : Որքա՛ն տարիներ է այս որոնք կը սահին շարունակ, ու այս տարիներուն մէջ ասկա ինչ կարողացանք

ճանչնալ ազգային դատի որոշ ուղղութիւնը : Ահա ասանում կուսակցութիւններ կ'ունենանք ու կ'ստեղծենք ամեն օր . ու յետոյ զգուանանքով կը թողու՞մք ու կ'ուզենք ոջնացնել, բայց ժամանակը կը սահի շարունակ թողլով իր գառն հետեւումքները : Ես այն հաւատքը ունիմ թէ մինչեւ որ հասնի այն օրը՝ որ ատեն եթէ ոչ ամեն հայ, գէթ ազգին մեծամասնութիւնը չկարողանայ հասկնալ իր իսկական էութիւնը՝ իր հայու պատիւը, ազգային դատը չպիտի ունենայ իր որոշ ուղղութիւնը : Թող ոջնանան ամբողջ կուսակցութիւնները, ես այն հաւատքը ունիմ թէ, աւելի օգտակար չպիտի ըլլայ անոնցմէ ետքը եկողը, մինչեւ որ հայը չունենայ իր ճշմարիտ գիտակցութիւնը :

Ահա այս հաւատքով, այս համոզումով է որ՝ կը սիրեմ տեսնել ամեն հայ, որ ունի իր մէջ բարոյական տէ՛ր, ազգային զգացում, հայրենիքի սէր թող . ջանայ միայն իր այդ ունեցածներովը պատուաւ աւել իր ազէտ արեւակիցները, թող ջանայ ճանչցնել անոնց ազգային ինքնաճանաչութիւն, այդ ատեն կուսակցութիւն բառը արդէն ըստ ինքեան նշանակութիւն չպիտի ունենայ :

Ո՞վ է յանցաւորը, երբ խել մը դու տարկապորտներու խաղալիքը կ'ըլլայ ամբողջ ազգի մը գոյութիւնը . — Տգիտութիւնը :

Ո՞վ է յանցաւորը՝ երբ ազգային դատի ճգնաժամուն մէջ իսկ կուսակցութիւնները իրարու գրաւի կը պատուեն սնտախ վէճերով, մէկդի թողլով ազգային ցաւն ու տառապանքը : — Տգիտութիւնը :

Ո՞վ է յանցաւորը՝ երբ ազգային սիրոյն համար գրամ չուայլոյ ու սիրտ վառնող անվատ մշակներ կը նախատուին ու կ'այլափոխուին . — Տգիտութիւնը :

Շարունակեցէք սոյն դառն հարցումս ներքը, ու պիտի տեսնէք թէ մեր ազգային թշուառութեանց ամենազլխաւոր պատճառը մեր ժողովրդի տգիտութիւնն է որ՝ չգիտէ զառեւ լաւը գէշէն՝ բարին չարէն :

Իսկ դուք, բարեկամս, շարունակեցէք ձեր յօդուածներ՝ մեծ հաճոյքով պիտի կարդացուին անոնք : Նպատակ ունենամք առ այժմ ազդութեան հիմը ամրացնելու, չէնքը վերջէն պիտի կառուցանեմք վրանս :
Մնամ՝ յարգանքօք
Խ.

ՀՐԱՒԻՐ ՄԻՈՒԹԵԱՆ

— 0 —

Նժգին ու պանդուխտ ո՛վ հայ եղբայրներ,
Հայրենեաց սիրով լցուած զաւակներ,
Եկէ՛ք միանանք մի սիրտ եւ մի սէր.
Հերիք ըլլանք զո՛հ մարդոց ետատէր :

Մինչ ցայսօր ցանուած սերմերու փոխան,
Հասած պտուղներ դառն ու դժման.
Երբ՝ մենք դեռ մեանք այսպէս ցիրուցան,
Անշո՛ւշտ կեղեքէ մեզ վաւթար Սուլթան :

Եկէ՛ք միանանք, տուած ձեռք ձեռքի,
Գործենք սուրբ սիրով մի սիրտ մի հողի,
Թող յայնժամ տեսնեն Եւրոպ ու Սուլթան,
Թէ՛ հայ քաջերու մնացորդներ կան :

Եթէ չենք սիրեր, չունինք միութիւն,
Դեռ շատ է կորոյս մեր խեղճ հայերուն,
Եւ ինչո՞ւ այսպէս հայը ազգովի,
Առանց միութեան ի դո՛ւր կորնչի :

Յեղափոխական, հայու օրդաններ,
Տուէ՛ք միութեան ջերմ հրաւերներ,
Մահու եւ կեանքի ժափերն են հասեր,
Համերայխութիւն կը պակսի մեզ դեռ :

Յառաջ ո՛վ հայեր, չուտով միութիւն,
Զգենք մեր « Ես » ք, փառասիրութիւն,
Եւ անոնք նոր սիրտ, նոր կեանք, նոր հողի
Յարինք, հետեւինք միութեան ձայնի :

Շուտ պարզենք կռուի՝ մեր սուրբ դրօշակ,
Մեր ազգի միակ փառք պատիւ ու կեանք,
Եւ գոչենք յաւէտ, կեցցէ՛ միութիւն,
Կեցցէ՛ Հայկական Յեղափոխութիւն,
Թափառիկ

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

ՏԵՍԻ ԶԲԵԶ

Արշալոյսին քով վարդաղեղ
Երեւցաւ կոյս մի սիրուն,
Որուն աչքերը լուսաղեղ
Հսկւոյ մի ծով էր անհուն :

Արեւ ճակատէն ի դուրս ելաւ
Արծաթափայլ շողերով,
Հըրեշտակներ ճերմակ հալաւ
Հաղած կոյին երկու քով :

Երկրպագու եղան խոնարհ
Արարածներ ամենայն,
— Սէր — է ըսին — սէր բոցավառ,
Երկնից պարզեւ անմահ :

Սէր է ըսին, ու նոյեցայ,
Կոյծ մը մոտաւ սրտիս մէջ,
Ես այն օրէն մինչեւ հիմայ
Ո՛հ, կը վաւիժ՝ դեռ անշէջ :

Ա Զ Դ

Կատակ կը ծախուի նաեւ հետեւեալ տե-
ղերն :

Սասունի սրճարանին ձխախաճառը Պ.
Թէրզեանի մօտ. Մուսալլա, Ապուտարբանյան
մզկիթին գիմացը Պր. Ա. Զարսկանէլեանի
եւ Մուսալլա, Վաստիպարական սրճարանը Պ.
Փեղամ Տ. Յարութեանեանի մօտ :

ОТГОВОРНИКЪ : П. ГЛУШКОВЪ.

Печатница К. Николовъ.— Варна.